ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԴԴ-ՇՀԾՁԲ-15/3-04-21>>

ք. Երևան << 10 >> հոկտեմբերի 2016թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մ-ԲԻ-Ռ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է **2 591 000 (երկու միլիոն հինգ հարյուր իննսունմեկ հազար)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան 30.12.2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Մյասնիկյան 22/4
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 08417829
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 220083335012000
ՀՀ ՖՆ պետական գանձարանի գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Ղեկավար Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Կ.
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Հավելված 1
<< 10 >>հոկտեմբերի 20 16թ. կնքված
N ԴԴ-ՇՀԾՁԲ-15/3-04-21 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ծառայության*				
	անվանում	տեխնիկական բնութագիր	մատուցման առավելագույն քանակը	մատուցման միավորի գին /ՀՀ դրամ/	ընդամենը /ՀՀ դրամ/
1	ԳԱԶ 31-10 մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 2.4լ.	Շարժիչի յուղի փոխում, ներառյալ յուղը/լիտր/,	24	3000	371000
		Շարժիչի յուղի զտիչի փոխում, ներառյալ զտիչը,	4	4000	
		Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,	1	9000	
		Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,	1	9000	
		Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը,	2	5000	
		Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը,	1	7000	
		Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/,	1	7000	
		Ինժեկտորի ֆարսոնկայի մաքրում,	2	8000	
		Հակասառիչ հեղուկի /անտիֆրիզ/ փոխարինում, ներառյալ հակասառիչ հեղուկը/լիտր/,	20	1200	
		Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը,	1	11000	
		Անվաբացքի կարգաբերում,	2	5000	
		Ռեդուկտորի կարգաբերում,	1	35000	
		Ջրի մղիչի փոխարինում, ներառյալ ջրի մղիչը,	1	25000	
		Լծակի վռանների կոմպլեկտի փոխարինում, ներառալ լծակի վռանների կոմպլեկտը,	1	14500	
		Հովհարի նորոգում ռելեյի փոխարինմամբ, ներառյալ ռելեն	1	8000	
		Մեկնարկիչի փոխարինում, ներառյալ մեկնարկիչը,	1	59000	
		Արգելակման փողրակի փոխարինում, ներառյալ արգելակման փողրակը,	1	6500	
		Շարժիչի բարձիկի փոխարինում, ներառյալ շարժիչի բարձիկը,	1	7000	
		Հետադարձի լծակի փոխարինում, ներառյալ հետադարձի լծակը,	1	14000	
		Անվակաունդի առանցքակալի փոխարինում, ներառյալ անվակունդի առանցքակալը,	1	11000	

2	Nissan Pathfinder (ունիվերսալ) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 4.0լ.	Շարժիչի յուղի փոխում, ներառյալ յուղը/լիտր/,	8	3000	530000
		Շարժիչի յուղի զտիչի փոխում, ներառյալ զտիչը,	2	8000	
		Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/,	1	25000	
		Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/,	1	23000	
		Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը,	1	8500	
		Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը,	1	9500	
		Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը,	1	36000	
		Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմլեկտ/,	1	35000	
		ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում, ներառյալ յուղը/8 լիտր/ և զտիչը,	1	70000	
		Ինժեկտորի ֆարսոնկայի մաքրում,	1	10000	
		Հակասառիչ հեղուկի /անտիֆրիզ/ փոխարինում, ներառյալ հակասառիչ հեղուկը/լիտր/,	5	1200	
		Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը,	1	18000	
		Անվաբացքի կարգաբերում:	1	5000	
		Կայունարարի կանգնակների փոխարինում, ներառյալ կայունարարի կանգնակները,	4	13500	
		Կայունարարի վռանների փոխարինում, ներառյալ կայունարարի վռանները,	4	8000	
		Հոդակապի փոշեթիկնոցի փոխարինում, ներառյալ հոդակապի փոշեթիկնոցը,	1	22000	
		Ապակիների հարվածամեղմիչների փոխարիում, ներառյալ հարվածամեղմիչները,	2	18000	
		ԱՓՏ-ի ախտորոշում, քնադում և հավաքում, դետալների փոխարինում, ներառյալ բոլոր դետալները:	2	50000	
3	Nissan X-Trail (ունիվերսալ) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 2.0լ.	Շարժիչի յուղի փոխում, ներառյալ յուղը/լիտր/,	8	2500	96000
		Շարժիչի յուղի զտիչի փոխում, ներառյալ զտիչը,	2	5000	
		Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/,	1	14000	
		Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/,	1	13000	
		Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը,	1	5500	
		Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը,	1	5500	
		Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը,	1	7000	

		Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմլեկտ/,	1	10000	
		Հակասառիչ հեղուկի /անտիֆրիզ/ փոխարինում, ներառյալ հակասառիչ հեղուկը/լիտր/,	5	1200	
		Անվաքացքի կարգաբերում:	1	5000	
4	Mercedes S 500 (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 5.0լ.	Շարժիչի յուղի փոխում, ներառյալ յուղը/լիտր/,	8	2500	237000
		Շարժիչի յուղի զտիչի փոխում, ներառյալ զտիչը,	2	7000	
		Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/,	1	19000	
		Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները/կոմպլեկտ/,	1	18000	
		Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը,	1	7500	
		Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը,	1	7500	
		Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը,	1	10000	
		Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմլեկտ/,	1	25000	
		ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում, ներառյալ յուղը/9 լիտր/ և զտիչը,	1	58000	
		Ինժեկտորի ֆարսոնկայի մաքրում,	1	9000	
		Հակասառիչ հեղուկի /անտիֆրիզ/ փոխարինում, ներառյալ հակասառիչ հեղուկը/լիտր/,	10	1200	
		Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը,	1	8000	
		Անվաքացքի կարգաբերում,	1	5000	
		Գազաբալոնի լվացում,	1	2000	
		Ռեդուկտորի կարգաբերում:	1	2000	
		Ինդուկցիոն կոճի փոխարկնում, ներառյալ ինդուկցիոն կոճը:	1	20000	
5	Toyota Corolla (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 1.6լ.	Շարժիչի յուղի փոխում, ներառյալ յուղը/լիտր/,	24	3000	445000
		Շարժիչի յուղի զտիչի փոխում, ներառյալ զտիչը,	3	7000	
		Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,	1	23000	
		Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,	1	22000	
		Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը,	1	8500	
		Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը,	1	9500	
		Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը,	1	14000	

		Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/,	1	26000	
		ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում, ներառյալ յուղը/8 լիտր/ և զտիչը,	1	65000	
		Ինժեկտորի ֆարսոնկայի մաքրում,	1	10000	
		Հակասառիչ հեղուկի /անտիֆրիզ/ փոխարինում, ներառյալ հակասառիչ հեղուկը/լիտր/,	10	1200	
		Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը,	1	13000	
		Անվաբացքի կարգաբերում,	1	5000	
		Գազաբալոնի լվացում,	1	5000	
		Ռեդուկտորի կարգաբերում,	1	5000	
		Ջրի անջատիչի փոխարինում, ներառյալ անջատիչը	1	17000	
		Հոդակապի փոխարինում, ներառյալ հոդակապը	1	43000	
		Ինժեկտորային գազասարքավորումների փոխարինում, ներառյալ բոլոր անհրաժեշտ պահեստամասերը	1	54000	
		Շարժիչ կափարիչի միջադիր փոխարինում, ներառյալ կափարիչի միջադիրը	1	20000	
6	Toyota Camry (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 2.5լ.	Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,	2	21000	208000
		Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,	2	19000	
		Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը,	2	7500	
		Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը,	2	7500	
		Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը,	2	8000	
		Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/,	2	16000	
		Ինժեկտորի ֆարսոնկայի մաքրում,	1	5000	
		Հակասառիչ հեղուկի /անտիֆրիզ/ փոխարինում, ներառյալ հակասառիչ հեղուկը/լիտր/,	10	1200	
		Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը,	2	5500	
		Անվաբացքի կարգաբերում:	2	5000	
		Ձեռքի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,	1	12000	
7	Toyota Camry (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային	Շարժիչի յուղի փոխում, ներառյալ յուղը/լիտր/,	8	3000	235000
		Շարժիչի յուղի զտիչի փոխում, ներառյալ զտիչը,	2	8000	
		Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,	1	22000	
		Հետևի արգելակման կոճղակի փոխում,	1	20000	

	ծավալը՝ 2.4լ.	ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,			
		Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը,	1	7500	
		Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը,	1	8500	
		Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը,	1	10000	
		Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/ կոմպլեկտ/,	1	25000	
		ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում, ներառյալ յուղը /8 լիտր/ և զտիչը,	1	60000	
		Ինժեկտորի ֆարսոնկայի մաքրում,	1	9000	
		Հակասառիչ հեղուկի /անտիֆրիզ/ փոխարինում, ներառյալ հակասառիչ հեղուկը/լիտր/,	10	1500	
		Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը,	1	13000	
		Անվաքացքի կարգաբերում:	1	5000	
8	Chevrolet Cruze (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 1.6լ.	Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը,	1	7500	234000
		Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը,	1	8500	
		Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի զտիչը,	1	10000	
		Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը/կոմպլեկտ/,	1	25000	
		ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում, ներառյալ յուղը/7 լիտր/ և զտիչը,	1	65000	
		Ինժեկտորի ֆարսոնկայի մաքրում,	1	10000	
		Հակասառիչ հեղուկի /անտիֆրիզ/ փոխարինում, ներառյալ հակասառիչ հեղուկը/լիտր/,	10	1500	
		Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը,	1	9000	
		Անվաքացքի կարգաբերում,	1	5000	
		Ատամնավոր փոկի փոխարինում, ներառյալ ատամնավոր փոկը,	1	40000	
		Ձգիչ հոլովակի փոխարինում, ներառյալ ձգիչ հոլովակը	1	39000	
9	KIA Cerato (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 1.6լ.	Շարժիչի յուղի փոխում, ներառյալ յուղը/լիտր/,	8	3000	235000
		Շարժիչի յուղի զտիչի փոխում, ներառյալ զտիչը,	2	7000	
		Առջևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,	1	23000	
		Հետևի արգելակման կոճղակի փոխում, ներառյալ արգելակման կոճղակները /կոմպլեկտ/,	1	22000	
		Օդի զտիչի փոխում, ներառյալ օդի զտիչը,	1	7500	
		Օդորակիչի զտիչի փոխում, ներառյալ օդորակիչի զտիչը,	1	8500	
		Վառելիքի զտիչի փոխում, ներառյալ վառելիքի	1	10000	

		զտիչը,			
		Վառոցքի մոմերի փոխում, ներառյալ վառոցքի մոմերը /կոպլեկտ/,	1	25000	
		ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում, ներառյալ յուղը /8 լիտր/ և զտիչը,	1	65000	
		Հակասառիչ հեղուկի /անտիֆրիզ/ փոխարինում, ներառյալ հակասառիչ հեղուկը /լիտր/,	10	1500	
		Շարժիչի փոկի փոխարինում, ներառյալ շարժիչի փոկը,	1	11000	
		Անվաբացքի կարգաբերում:	1	5000	
		Էլեկտրասարքավորման նորոգում լամպերի փոխարինմամբ, ներառյալ լամպերը/կոմպլեկտ/:	1	5000	

Ծառայության մատուցման ժամկետը

Սկիզբը	Ավարտը
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2016թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ

Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա

Պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված:
***Գնման առարկա հանդիսացող վերոնշյալ ծառայությունները մատուցվում են Երևան քաղաքում:**
****Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ֆն. նախարարության գործառնական գանձարան

Ղեկավար Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մյասնիկյան 22/4
ՀՎՀՀ՝ 08417829
Հ/Հ՝ 220083335012000
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ

Տնօրեն Ա. Մարտիրոսյան

(ստորագրություն)

Հավելված 2
<<10>>հոկտեմբերի 20 16թ. կնքված
N ԴԴ-ՇՀԾՁԲ-15/3-04-21 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում			
		հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
1.	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	2591000	2591000	2591000	**2591000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մյասնիկյան 22/4
ՀՎՀՀ՝ 08417829
Հ/Հ՝ 220083335012000
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Վ. Բաղդասարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
<< >>հոկտեմբերի 20 16թ. կնքված
N ԴԴ-ՇՀԾՁԲ-15/3-04-21 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<< >>հոկտեմբերի 20 16թ. կնքված
N ԴԴ-ՇՀԾՁԲ-15/3-04-21 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն